



ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

25.07.14թ.

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
ք.Ապարան, Բաղրաձյան 26
Հեռ./ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
Info_aparan@aarhus.am

ՀՀ Բնապահպանության նախարար
Արամայիս Գրիգորյանին

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝
Նատայա Մանուկյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն նախարար.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը և հավաստի տեղեկատվության տրամադրումը խնդրում եմ Ձեզ Ապարանի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Ինչպիսի՞ փորձագիտական եզրակացություն է ստացել Արագածոտն մարզի Թուխմանուկի հանքավայրի երրորդ պոչամբարի վերաբերյալ ներկայացված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերջին նախագիծը.
2. պետական ո՞ր գերատեսչություններն են փորձաքննության ներկայացված պոչամբարի վերջին նախագծի վրաբերյալ մասնագիտական կարծիքներ կամ եզրակացություններ ներկայացրել.
3. Խնդրում ենք տրամադրել պոչամբարի վերջին նախագծի փորձագիտական եզրակացության, նախագծի մասնագիտական կարծիքների կամ եզրակացությունների, ինչպես նաև ազդակիր համայնքի կարծիքների կամ դիտողությունների, պահանջների ու առաջարկությունների վերաբերող փաստաթղթերի պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/).
Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝
Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Նատայա Մանուկյան